**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-2/6-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 01.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից «ԵՐՎԱՂԱ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մխեյան, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 21.11.2019թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-2/6-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդի հանձնարարությամբ մատակարարել սույն Համաձայնագրով նախատեսված ամբարձիչներ (այսուհետև՝ Ապրանք) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ապրանքներիգնման ժամանակացույցի, իսկ Վաճառողը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ապրանքների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարման ենթակա ապրանքների գինը կազմում է 99082320 (իննսունինը միլիոն ութսուներկու հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն : Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդը մատակարարած ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքների հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՊԳ վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԵՐՎԱՂԱ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Արին Բերդի 3/4 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 1570005353830100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02231092 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ | Տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Հ. ՄԽԵՅԱՆ |

*Հավելված N 1*
***N ԳՀԱՊՁԲ-20-2/6-1** պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը | Ընդհանուր գումարը | 2020թ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ եռամսյակ |
| 1 | Ամբարձիչներ Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127 | հատ | 200 | 88866 | 17773200 | 200 |
| 2 | Ամբարձիչներ Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Տ-127 | հատ | 50 | 238800 | 11940000 | 50 |
| 3 | Ամբարձիչներ Թիրախային ամբարձիչ ՌՀԿ | հատ | 670 | 103536 | 69369120 | 670 |

*Հավելված N 2*
***N ԳՀԱՊՁԲ-20-2/6-1** պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

դրամ

| Հ/Հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | CPV կոդ | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Ամբարձիչներ Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Ս-127 | 42431000/501 | 17773200 | 17773200 | 17773200 | 17773200 | 17773200 | 17773200 |
| 2 | Ամբարձիչներ Թիրախային ամբարձիչ ՈՒՄՈՒ-Տ-127 | 42431000/502 | 11940000 | 11940000 | 11940000 | 11940000 | 11940000 | 11940000 |
| 3 | Ամբարձիչներ Թիրախային ամբարձիչ ՌՀԿ | 42431000/503 | 69369120 | 69369120 | 69369120 | 69369120 | 69369120 | 69369120 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Երվադա» ՍՊԸ Տնօրեն

Հ. ՄԽԵՅԱՆ